Միջազգային գիտաժողով և ցուցահանդես Հայաստանի ազգային ագրարային համալսարանում
(հասցեն՝ Երևան, Տերյան 74, https://maps.app.goo.gl/nUVufwejd7v9Mwdo6)

2024 թ. սեպտեմբերի 10-11-ը Հայաստանում տեղի կունենա
«Կենսաակտիվ միացությունների հայտնաբերում, հետազոտություն և օգտագործում՝ առողջ և ֆունկցիոնալ սննդամթերքի զարգացումը» թեմայով
ԱՄՆ «Ֆունկցիոնալ սննդի կենտրոնի 32-րդ միջազգային սատելիտային գիտաժողով» և «Ֆունկցիոնալ սննդամթերքի և կենսաակտիվ միացությունների ակադեմիական ընկերակցության (ASFFBC)» 20-րդ սիմպոզիումը և ցուցահանդեսը:
https://www.functionalfoodscenter.net/satellite-conference-ffc32.html

- Կազմակերպիչ՝ ԱՄՆ ֆունկցիոնալ սննդի կենտրոն
- Անցկացման վայրը՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան
- Անցկացման ձևաչափը՝ առկա եւ առցանց

Ոլորտի գիտնականները, արտադրողները, Ագրարային համալսարանի դասախոսները և ուսանողները լավագույն հնարավորություն ունեն մասնակցելու ֆունկցիոնալ սննդի ոլորտում համաշխարհային նշանակության այս կարեւոր իրադարձությանը, որն այս անգամ կայանալու է հենց Հայաստանի ազգային ագրարային համալսարանում (https://anau.am/storagrvel-e-hamagortsaktsutyan-hushagir.../):

Գիտաժողովում զեկուցումներով հանդես գալու ցանկություն ունեցողները պետք է նախապես գրանցվեն եւ իրենց թեմայի ամփոփագիրն ուղարկեն ներքևի հղմամբ:

https://www.functionalfoodscenter.net/registration-form_ffc32.html

Գիտաժողովի հայաստանցի մասնակիցներն ունեն մասնակցության վճարների համար դրամաշնորհ ստանալու լավ հնարավորություն, ընդ որում ՀԱԱՀ ուսանողների մասնակցությունն ապահովելու համար կլինի հովանավորման ծրագիր, որին կարող եք դիմել՝

https://www.functionalfoodscenter.net/scholarship-application-form_ffc32.html

Ցուցահանդեսի մասնակցության և տաղավարների վաղ ամրագրման համար գործում են զեղչեր:

Գրանցվեք կից հղումով՝
https://www.functionalfoodscenter.net/registration-form_ffc32.html

Ցուցահանդեսի հիմնական թեմատիկ բաժիններն են.

- Կաթնամթերք, պանիր
- Թեյեր,
- Դեղաբույսեր, եթերային յուղեր

- Մեղր և մեղվաբուծական արտադրանք,
- Հացաբուլկեղեն, հրուշակեղեն,
- Նպարեղեն. մակարոնեղեն,
- Մսամթերք. թռչնամիս. երշիկեղեն
- Ձուկ և ծովամթերք,
- Համեմունքներ,
- Արևածաղկի և բուսական յուղեր
- Նախուտեստներ. ընկույզ. չրեր
- Միկրոկանաչի
- Բանջարեղեն, մրգեր, բանջարեղենային և մրգային պահածոներ,
- Պահածոներ. սոուսներ. կետչուպ. աղցաններ,
- Սերմեր (հավաստագրված սերմ արտադրողներ, ներմուծողներ)
- Շոկոլադ
- Սառեցված սնունդ. կիսաֆաբրիկատներ
- Հյութ, ջուր, հանքային ջուր, զովացուցիչ ըմպելիքներ,
- Առողջ սնունդ. ավանդական և օրգանական սնունդ,
- Դիաբետիկ սնունդ,
- Դիետիկ սնունդ,
- Գարեջուր,
- Գինի,
- Թունդ ըմպելիքներ,
- Սննդի որակի վերահսկում,
- Այլ:

Ցուցահանդեսի տաղավարի վարձակալության արժեքը 2 օրվա համար կարող եք տեղեկանալ կապելով մեր հետ, քանի որ գործում են զեղչեր ստորև ներկայացված ամսաթվերին դիմելու դեպքում:

-Ամրագրումը մինչև օգոստոսի 15-ը 2024թ
-Ամրագրում օգոստոսի 15-ից 30-ը
-Ամրագրում սեպտեմբերի 1-9-ը:

Ցուցահանդեսի մասնակիցներին ոչ միայն ժամանակ կտրամադրեն իրենց արտադրանքը կամ ծառայությունը ներկայացնելու համար, այլև նրանց կտրվեն բոլոր կանոնավոր մասնակիցների առավելությունները.

- Մեկ զովազդ FFC երկշաբաթյա տեղեկագրում.
- FFC32 խորհրդաժողովի/ցուցահանդեսի կայքում կտեղադրվեն Ձեր ընկերության լոգոն/կենսագրությունը.
- Տեղեկատվական թերթիկներ կդրամադրվեն ներկաներին.
- Ցուցահանդեսի մասնակիցները կներկայացնեն իրենց առողջ և ֆունկցիոնալ սննդամթերքը, արտադրանքը կամ ծառայությունը.
- Կարող եք մասնակցել միջազգային գիտաժողովի բոլոր նիստերին (աշխատանքային լեզուն՝ անգլերեն):

Տեղեկացնում ենք նաև, որ ԱՄՆ-ում հոկտեմբերի 2-ից 4-ը DoubleTree by Hilton Hotel San Diego, CA, USA հյուրանոցում (https://maps.app.goo.gl/6iscsMbW9DsNYsqw8) Ֆունկցիոնալ սննդի կենտրոն/ինստիտուտը (FFC՝ https://www.functionalfoodscenter.net) կկազմակերպի Ֆունկցիոնալ սննդի կենտրոնի 32-րդ և Ֆունկցիոնալ սննդի և կենսաակտիվ միացությունների ակադեմիական ընկերության 20-րդ միջազգային գիտաժողովը և ցուցահանդեսը «Կենսաակտիվ միացությունների հայտնաբերում, հետազոտություն և օգտագործում՝ առողջ և ֆունկցիոնալ սննդամթերքի զարգացումը» թեմայով (https://www.functionalfoodscenter.net/conference-ffc32.html):

Ֆունկցիոնալ սննդի կենտրոն/ինստիտուտը ֆունկցիոնալ սննդամթերքի գնահատման և ֆունկցիոնալ սննդագիտության բնագավառում հանրային կրթության ոլորտների համաշխարհային առաջատար կազմակերպությունն է, որը հիմնադրվել է 1998 թվականին: Հիմնադիրը, մեր հայրենակից, ծնունդով արցախցի, ֆունկցիոնալ սննդի ոլորտում համաշխարհային հեղինակություն վայելող դոկտոր Դանիկ Մարտիրոսյանն է՝ Ֆունկցիոնալ սննդի և կենսաակտիվ միացությունների ակադեմիական ընկերության հիմնադիրը, «Առողջություն և հիվանդություններ ֆունկցիոնալ սննդի պարբերական»-ի գլխավոր խմբագիրը:

Մասնակիցներն ունեն նաև իրենց աշխատությունները «Սկոպուս» գիտաչափական շտեմարանում ընդգրկված պարբերականներում տպագրելու հնարավորություն:

Ներկայացված գիտական պարբերականները (Functional Food Center/Food Science Publisher՝ https://www.ffhdj.com/) ինդեքսավորված են Scopus-ում, Web of Science-ում, Emerging Sources Citation Index, index Copernicus, CrossRef, Google Scholar և այլ միջազգային մատենագիտական համակարգերում, և հրապարակվող հոդվածները կրում են նաև թվային օբյեկտների նույնականացման համարանիշ (DOI):

Ֆունկցիոնալ սննդամթերքի ուսունասիրությունը գիտության այն ճյուղերից է, որը ներառում է կենսաակտիվ միացությունների ուսումնասիրությունը և ֆունկցիոնալ սննդամթերքի ստեղծումը: Ֆունկցիոնալ սնունդը նպաստում է մարդու տարբեր հիվանդությունների կանխարգելմանը և բուժմանը: Ուստի ֆունկցիոնալ մթերքների արտադրությունն ու դրանց հատկությունների ուսումնասիրությունը հրատապ խնդիր է ժամանակակից գիտնականների համար ամբողջ աշխարհում:

Ցուցահանդեսը և գիտաժողովը կնպաստեն Հայաստանի Հանրապետությունում հեռանկարային ճյուղ հանդիսացող ֆունկցիոնալ

սննդամթերքի արտադրությանը, որը գիտական հայտնագործությունների հիման վրա ստեղծված ամենաարժեքավոր և առողջարար սնունդն է: Ֆունկցիոնալ պարենային ապրանքները 2-3 անգամ ավելի թանկ են, քան սովորական մթերքները, այնպես որ, լավագույն տարբերակի դեպքում, Ցուցահանդեսի մասնակից ընկերությունների պատրաստված պարենամթերքը համապատասխան ընթացակարգեր անցնելուց հետո կարող է վաճառվել և բերել 2-3 անգամ ավելի շատ եկամուտ:

Ընդհանուր հարցերով դիմել դոկտոր Դանիկ Մարտիրոսյանին.

- Ֆունկցիոնալ սննդի և կենսաակտիվ միացությունների ակադեմիական ընկերության հիմնադիր,
- «Առողջություն և հիվանդություններ ֆունկցիոնալ սննդի պարբերական»-ի գլխավոր խմբագիր:
  Email: ffc@functionalfoodscenter.net, www.functionalfoodscenter.net,
  5050 Quorum Drive, Suite 700, Dallas, Texas, 75254, USA
  https://www.facebook.com/danik.martirosyan
  https://www.linkedin.com/.../functional-food-center.../

Կազմակերպվող ցուցահանդեսի և գիտաժողովի մասնակցության և տաղավարների ամրագրման հարցերով դիմել պարոն Մերուժան Զաղայանին՝ «Ֆունկցիոնալ սննդի կենտրոնի/FFC 32-րդ միջազգային գիտաժողով/ցուցահանդեսի գիտական և կազմակերպչական հարցերով կազմկոմիտեի անդամ՝
https://www.functionalfoodscenter.net/organizing-committee--ffc32.html
բջջ. +37499698869 (Viber/WhatsApp/Telegram)
Email: mhzadayan.consulting@gmail.com

Գիտաժողովի կազմկոմիտեում ընդգրկված են նաև ՀԱԱՀ-ից՝

- Գայանե Ավագյանը
- Գայանե Գասպարյանը
- Գայանե Մելյանը
- Գագիկ Սանթրոսյանը: